Մրցույթի հայտարարություն

ՀՀ Կոտայքի մարզի <<Չարենցավանի N6 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի 6-րդ և 7-րդ կետերի համաձայն՝ ՀՀ Կոտայքի մարզի <<Չարենցավանի N6 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղը զբաղեցնելու համար:

1. Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1) ՀՀ քաղաքացիությունը.
2) ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):
2. Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝
1) դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով
2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.
3) հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը.
4) տվյալ հաստատության զարգացման ծրագիրը թղթային և էլեկտրոնային տարբերակներով.
5) ինքնակենսագրություն:
Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են ՀՀ Կոտայքի մարզի <<Չարենցավանի N6 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ում 2021թվականի սեպտեմբերի 10 -ից մինչև հոկտեմբերի 1-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից մինչև ժամը 15:00-ն, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2021թվականի հոկտեմբերի 15-ին՝ ժամը 15:00-ին, ՀՀ Կոտայքի մարզի <<Չարենցավանի N6 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ում, ք . Չարենցավան, Ռուսովի 7:

Տեղեկությունների համար դիմել ՝ 094-85-65-30, vardik.67@mail.ru, charentsavan6@schools.am:

Քաղվածք

ՀՀ Կոտայքի մարզի <<Չարենցավանի N6 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի կոլեգիալ կառավարման խորհրդի 09.09.2021թ N 9 նիստի արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ

ՀՀ Կոտայքի մարզի <<Չարենցավանի N6 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի տնօրեն Ա. Փանոսյանի զբաղեցրած պաշտոնից ազատման և տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթ հայտարարելու հարցի մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ

ՀՀ Կառավարության 04 մարտի 2010 թվականի N319-Ն որոշման հավելվածի 2.2 կետի համաձայն հայտարարել մրցույթ ՀՀ Կոտայքի մարզի <<Չարենցավանի N6 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի տնօրենի թափուր տեղի պաշտոնը զբաղեցնելու համար:

Խորհրդի նախագահ՝ Վ. Խաչատրյան

ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է

Քարտուղար՝ Ք.Նահապետյան